ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 20 >> 02 2013թ. N: 39-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ԻԿԻԼԻԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան գյուղական համայնքի ղեկավար Վարդան Իկիլիկյանը խախտելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջները, առանց սահմանված կարգով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու, Ազատան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման 54քմ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-004-111-018) 2009 թվականի օգոստոսի 8-ին աճուրդով օտարել է հասարակական օբյեկտ (խանութ) կառուցելու նպատակով,_այսինքն՝ կատարել է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 56[1]-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտում:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) կողմից 2012 թվականի հոկտեմբերի 14-ին կազմված <<Հողերի օգտագործման և պահպանման խախտումների>> թիվ 28 ակտը, Տեսչության պետի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի Հ.8 որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244[9]-րդ, 281-283-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան գյուղական համայնքի ղեկավար Վարդան Իկիլիկյանի նկատմամբ նշանակել հարյուր հիսուն հազար դրամ տուգանք, որը ենթակա է մուծման 15 օրվա ընթացքում՝ պետական բյուջե հ/հ 900005242954:
2. Որոշման պատճենն երեք օրվա ընթացքում ուղարկել Վարդան Իկիլիկյանին:
3. Սույն որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով տասն օրվա ընթացքում:

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է